

Յեան մասնաւոր դիւանը շարունակեց բժշկական հայերէն տետրակներու շարքը, եւ վերջերս հրատարակեց *Վեներական հիւանդու-թիւններու մասին բացիկ մը*։

Սակայն «Բուժանք» ի վրայ կ'իյնայ ուրիշ պարտականութիւն մը: Ժողովուրդին ներկայացնել ոչ միայն առողջ կեանքին գիտութիւնը, այլ նաև այդ գիտութեան նուիրուած երիտասարդ սեբունդը, հասցնելու համար բժշկական տաղանդներ: Այս առթիւ, հարցին կարեւորութեանը պատճառաւ, դիտել կուտամ թէ օտար բժշկութեան մէջ տեսակ մը մարզանք կը կատարուի երկու ուղղութեամբ.— ա) գրչի եւ բ) լեզուի: Կրտսեակորարօր Յրամոացի, ներք կարծես մրցումի մտած են պատրաստելու համար *պերճախօս բժիշկներ*, բժշկութեան պերճ բացատրումին համար: Խօսելու ձիրքը ինչ մեծ դեր կը խաղայ բժշկութեան մէջ: Եթէ ոչ պերճախօսութեան, գոնէ գրաւ: Բժշկութեան ազատ դաշտին մէջ, պէտք է մարզանքի գան մեր երիտասարդ բժիշկները: Այսպէսով սատարած կ'ըլլան ոչ միայն հեռաւոր ափերու վրայ նստած իրենց հայրենակիցներուն առողջաւահական դասընթացքին, այլ նաև էջ մը կ'աւելցնեն հայ բժշկական գրականութեան: Արովհետեւ մեծ նշանակութիւն ունի բժշկական գրականութիւնը, հոգ չէ թէ նիհար սկիզբով եւ հեռուողական: Վերջապէս, մեր բժշկական պատմութեան մէջ շատ մը հայ բժիշկներու աշունները շարելով շե՛նք կրնար պարծննայ թէ բժշկական պատմութիւն ունինք: Բժշկական պատմութիւնը՝ աններուն պատմութիւնը չէ.— այդ համոզումին վրայ իրիկունը իջա շատո՛նց.— այլ պատմութիւնն է բժշկական գործին: Աւտի բժշկական գործ եւ գրականութիւն ունենալու համար, «Արեւելիի մէջ հին առաջաւոր դիրքին վրայ» մնալու համար, փափարկի է որ ձիգ թափուի, մարզանք կատարուի:

«Բուժանք» այդ մարզանքին յարմար բեմ մըն է, բեմ մը, որ կը խօսի յանուն ժողովուրդին օգուտին, յանուն պատմութեան գործին, եւ որուն շուրջ պէտք է խմբուին մեր բոլոր արուեստակիցները:

Ե. ՆԱՐԳՈՒՆԻ

ԸՆԹԵՐՅՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»-ը, կը կարգաս ե կ'օգտուիս,

ՉԵՍ ՈՒՋԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ,

բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն ե օգտուին «Բուժանք»-էն ե զարգացնեն զայն:

ԻՍԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»-Ը ԿԸ ԿԱՐԳԱՍ, գիացիր որ չի բաւեր կարգաւ, այլ պէտք է ունենալ եւ պահել «Բուժանք»-ը, որուն մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել սուսած բաժնեկիրդ:

ՈՒՐԵՄՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԷ: